

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Ամերիկահայ բանասեր Հ. Քյուրդյանը «Բազմավկայի» 1958 թ. (3—5) միացյալ համարում մի գրախոսական է գետնդել Վ. Թեմուրճյանի «Գորգագործությունը Հայաստանում» երեսնում լույս տեսած աշխատության վերաբերյալ:

Հ. Քյուրդյանը թեև այդ աշխատության մասին որոշ գրվածական խոսքեր է ասել՝ «Բազմավկան շահեկան գործ մըն է», «Թեմուրճյան շատ ավելի գնահատելի գործ կատարած է իր գործին Բ գլխուն մեջ» և այլն, այնուամենայնիվ, գրախոսականից ակնհայտ է հոգվածագրի միտումնավորությունը:

Եվ իրոր, Հ. Քյուրդյանը հիվանդագին է ընդունում Վ. Թեմուրճյանի աշխատության «Երկու խոսք», «Գրականության տեսություն» բաժիններում և այլ տեղերում արվեստի բուրժուական բնագավառների նենգամտությունների մերկացումը հեղինակի կողմից, ինչպես նաև Վ. Թեմուրճյանի միանգամայն արդարացի դիտողությունը Հ. Քյուրդյանի հասցեին՝ աղբյուրների հանդեպ վերջինիս անպատասխանատու վերաբերմունքի մասին:

Հ. Քյուրդյանի շահախնդիր կողմնակալություն մեջ դժվար չէ համոզվել թեկուզ հետևյալ փաստով:

Պարսկական արվեստի և հնագիտության ամերիկյան ինստիտուտի գիրեկտոր Արթուր Աֆամ Բոպր «Ասիական արվեստ» տարեգրի 1925 թ. 2-րդ համարում, «Հայկական վիշապ գորգերի առասպելը» հոդվածով փորձում էր ոչ միայն ժխտել հայկական վիշապավոր գորգերի առկայությունը, այլև կասկածի տակ առնել նույնիսկ հայերի գորգագործությամբ զբաղվելը: Սակայն, այստեղ հատկանշականն այն է, որ Արթուր Աֆամ Պոպի աղավաղումների դեմ ինքը՝ Հ. Քյուրդյանը, սրանից 29 տարի առաջ՝ 1930 թ., նույն «Բազմավկայի» 413-րդ էջում՝ «Պատասխան առ միստր Արթուր Աֆամ Պոպ» հոդվածով այդ տեսակետի դեմ իրավացի բողոքողներից մեկն է եղել: Այդտեղ, ի միջի այլոց, ասված է. «Եր. Պոպ... ապացուցելու համար իր հայտարարությունները... առանց հարեանցի ծանոթության... առանց մեկ փաստի, երևակայությունն մղյալ... հայոց գորգարվեստի պատմությունը կուզե իր ուղածին պես գրել»: Բայց այժմ ինչու է Հ. Քյուրդյանը հանդես գալիս սյուպերների պաշտպանի դերում:

Իր աշխատության մեջ Վ. Թեմուրճյանը իրավացի կերպով նշում է, որ հայ մշակույթի պատմաբանները թիչ են զբաղվել հայկական գորգագործության պատմությամբ, այդ հանգամանքը հեղինակին ցավ է պատճառում: Սակայն այստեղից Հ. Քյուրդյանը անմիջապես եզրակացնում է, թե աշխատության հեղինակը ցանկանում է իրեն վերապահել գորգագործության մասին գրելու առաջնությունը Այսպիսով, դանդաղում է Հ. Քյուրդյանը, «անտեսվել են» իր Հ. Քյուրդյանի գրած հոդվածները և հատկապես նրա «Գորգը հայոց մոտ» վերնագրով գրքուկը: Որ հայկական գորգագործությանը նվիրված Հ. Քյուրդյանի հոդվածները ծանոթ են Վ. Թեմուրճյանին, այդ երևում է թեկուզ նրանից, որ աշխատության առանձին էջերում հեղինակը նշում է այդ հոդվածների որոշ շահեկան կողմերը, ինչպես նաև ընդհանրապես գորգարվեստի և հատկապես հայկական նոր գորգանկարների ստեղծելու մասին Հ. Քյուրդյանի տեսակետների հանդեպ բնագավառական վերաբերմունքը ցուցաբերելուց (տե՛ս աշխատության 164-րդ էջը և հետ.)։ Իսկ ինչ վերաբերում է «Գորգը հայոց մոտ» գրքուկին, որը Հ. Քյուրդյանի նախկին հոգվածների վերամշակությունն է, ապա դրա հետ ծանոթանալը թերևս օգտակար լիներ, եթե գրքուկը Հայաստանում ստացվեր նախքան Վ. Թեմուրճյանի աշխատության լույս տեսնելը:

Այսպիսով, կարծում ենք, խոսք չի կարող լինել Վ. Թեմուրճյանի կողմից առաջնությունը իրեն վերապահելու մարմաջի մասին: Հենց այն հանգամանքը, որ Վ. Թեմուրճյանի աշխատության մեջ գրականության տեսության առանձին ընդարձակ բաժին է հատկացված, ինքնին վկայում է, որ հեղինակը այդ բնագավառում իրենից առաջ կատարվածն անտեսելու մտադրություն բնավ չի ունեցել: Այլ բան է, որ նա համաձայն չէ այս կամ այն հեղինակի որոշ մոտերի ու կարծիքների հետ:

Այժմ մի քանի խոսք հոգվածագրի ավելի «լուրջ առարկությունների» մասին: Վիշապի և արծվի կովի տեսարանով բոլորին հայտնի գորգը, մասնագետների կարծիքով, գործված կամ վերաբաղված պետք է լինի XIII դարում: Հ. Քյուրդյանը, այդ գորգի գործվելու թվականը վեճի առարկա դարձնելով, փոխանակ գիտականորեն հակառակ ապացուցելու, բավարարվում է, այն սոսկ «անհիշատակարան» գորգ հայտարարելով: Ասես, նյութական մշակույթի նմուշների, այդ թվում և գորգերի թվականը ճշտելու համար, բացի արձանագրությունից, ուրիշ տվյալներ գոյություն չունենալին:

Հ. Քյուրդյանը, իր սլաքները ուղղելով սովետահայ գորգի հայտնի վարպետների նոր ստեղծագործությունների՝ դիմանկարային գորգերի վրա, գրում է. «...նա կշատագույն, կգնահատե՞ն ծառայարար լուսանկարչական կենդանագիրներն առտահայտություններ բոլորովին զուրկ արվեստե...»։ Հայկական գորգարվեստի պատմության մեջ նոր տեխնիկայով և բարձր արվեստով ստեղծագործված լավագույն դիմանկարային գորգերը սովետական արվեստագետների բարձր գնահատությանն են արժանացել։ Իսկ որ Հ. Քյուրդյանը դիմանկարային գորգը արվեստ չի համարում, դա արդեն ռեալիստական արվեստի մասին թյուր պատկերացում ունենալու և ապա՝ «գեղադիտական ճաշակի» արդյունք է։ Մեր գորգարվեստի մասնագետները կարողացել են լուսանկարչական դիմանկարը վերածել գորգային դիմանկարի, այսինքն՝ գորգի շրջագծերի զարդանախերը ներդաշնակելով գորգի գլխավոր մոտիվի՝ դիմանկարի հետ, ստեղծել գորգային գեղանկարչական նոր կտավներ։ Այդ քննադատում կան և անհաջող գործեր, բայց դրանց մասին խոսված է աշխատության համապատասխան գլխում։

Հ. Քյուրդյանը ցասկոտ վերաբերմունք է ցուցաբերել նրանց դեմ, ովքեր իրենից առաջ հայկական գորգագործության մասին մի նոր բան հայտնաբերելու րախտ են ունեցել։ Ժամանակին նա այդպես դիմավորեց նաև Արմենակ Սազյանին, երբ նա խալի տերմինը՝ Կարին քաղաքի արաբերեն «Կալիկալա» անվան կրճատ «կալի» ձևից առաջացած լինելու վերաբերյալ վկայակոչում էր XIII դարի արաբ աշխարհագիր Յակուտի պատմական տեղեկությունը։ Հ. Քյուրդյանը ոչ միայն տարակուսանք է հայտնում Մերձավոր Արևելքի երկրներում հայկական գորգերի տարածման մասին արաբ հեղինակի այդ վերին աստիճանի շահական վկայության առթիվ, այլև մերժում է դա՝ պատճառաբանելով, որ Կարինը, ըստ նրա, իբր թե անցյալում արհեստագործության և առևտրի կարևոր կենտրոն չի եղել։ Ինչպես հայտնի է, Կարինը, որպես արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն, միջնադարում կարևոր տեղ էր գրավում։ Հետագայում, XVII դարի աշխարհագիր էվլիա Չելեբին իր «Սելյահետ-նամեում» («Ուղևորություն») նույնպես խոսում է Կարինի հանրածանոթ գորգերի մասին։

Հ. Քյուրդյանը փորձում է հենվել XIX դարի լեզվաբան Գևորգ Դպիր Պալատցու հեղինակության վրա։ Սակայն, տարօրինակն այն է, որ Պալատցին խալի տերմինի ծագման մասին իր բառարանում ոչինչ չի ասել, մինչդեռ հոգևածագիրը ենթադրում է, որ խալի բառը առաջացել է Պալատցու՝ պարսկերեն-հայերեն բառարանում նշված «թևալա» կամ «կեպալե» բառերից։ Մինչդեռ, Պալատցու բացատրությամբ, այդ երկու բառերը առաջին իմաստով նշանակում են զգված բամբակի «բյուլա», երկրորդով՝ կարասի, հանդերձանք։

Ինչ վերաբերում է հայկական «տապաստ» կամ «տապաստակ» կոչված գորգերին, ըստ հոգևածագրի, դրանք իբր թե սեղանի կտր, կաշվե սփռոցներ են եղել միայն և ոչ փոքր գորգեր։ Մինչդեռ Հ. Քյուրդյանը, եթե դիմեր թեկուզ հենց միայն «Հայկազյան բառարանին», ապա նա «ակումբ» (հատ. Ա, էջ 27) և «տապաստ» (հատ. Բ, էջ 845) բառերին այնտեղ տրված բացատրություններից կհամոզվեր, որ դրանք, ինչպես նաև «սեղան», «բազմական», «օթոց», «սփռոց», «գորգ» տերմինները հոմանիշ են, ուստի և «ակումբ» ու «տապաստակը» կարող էին նշանակել նաև գորգ։

Վերջապես, Հ. Քյուրդյանը գտնում է, որ Վ. Թեմուրճյանի աշխատությունը ծանրաբեռնված է Ռիշելիեի և Կուրբերի երկու հրամանագրով, որոնք վերաբերում են նոր Զուլայի հայ վաճառականներին առևտրի թույլտվություն տալուն։ Ելնելով աշխատության պատմա-ազգագրական բնույթից, բնական է, որ բնության առարկա պետք է դարձվեին ոչ միայն գործվածքի տեխնիկայի զարգացման, գորգային դարդանախերի, փոխառությունների և փոխազդեցությունների խնդիրները, այլև առևտրի միջոցով հայկական գործվածքների, ըստ որում և գորգերի տարածման ոլորտի հարցերը։

Այսուհանդերձ, «Գորգագործությունը Հայաստանում» աշխատությունը չի սպառում հայ կիրառական արվեստի այդ հնագույն և ներկայումս էլ բուռն զարգացում ապրող քնազավառի բոլոր հարցերը։ Աշխատության մեջ, անշուշտ, կան նաև որոշ թերություններ, որոնց մասին խոսվել է սովետական գիտական հրատարակություններում լույս տեսած գրախոսականներում։ Սակայն այդ նույն գրախոսականներում, ինչպես նաև մասնագետներից ստացված մի շարք նամակներում, Վ. Թեմուրճյանի աշխատությունը ընդհանուր առմամբ դրական է գնահատվում։

Հ. Քյուրդյանը անաչառ մոտեցում չի ցուցաբերել քննարկվող խնդիրների նկատմամբ, ուստի և նրա գրախոսությունը ոչ միայն չի օգնում լուծելու հայ մշակույթի և մասնավորապես գորգարվեստի որոշ կնճռոտ հարցեր, այլև ավելի է խճողում դրանք։

Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ,

Ա. ԱՎԴԱԼ, Կ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ